

Թիւ 26319  
Մարտ 28, 1979

Մեծայարդ

Տիար Հարըլտ Պէյլէրեան  
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
ծխական Խորհուրդի Առենապետ  
Մառւթ Միլուոքի.

Յարգեի Տիար Պէյլէրեան,

Ստացած ենք Մարտ 18, 1979 թուակիր Եկեղեցւոյդ աեղեկագիրը, որով կը հա-  
ղորդուի թէ Յունուար 28ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատար-  
ւած է ծխական Խորհուրդի աասը անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացուելով քուէ-  
արկութեան արդիւնքը՝ կը ինդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, քան  
ստորեւ տրուած ցանկին:

Այս առթիւ կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել որ համաձայն Թեմական  
Կանոնադրութեան՝ նորընտիր ծխական Խորհուրդի դիւանը կը կազմուի Առաջնորդին  
կողմէ ընտրութիւնները վաւերացուելէն եաք:

Հանեցէք Ներփակեալ աեղեկագիրները ստորագել տալէ եաք վերադարձնել Առաջ-  
նորդարան: Խոկ ելեւմական հաշուեկշիոք, էջ 8, պէտք է ամբողջացնել: Համա-  
ծայն Ներկայացուած հաշիւներուն 3919.17 տոլար տոկոս պահած էք: Պէտք է  
ցոյց տալ թէ այս տոկոսին դրամագլուխը կամ մայր գումարը ի՞նչ է եւ ո՞ւր  
արձանագրուած է:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր  
գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շի-  
նութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Միլու ողջունիւ

Ներսէս Ներսէսեան  
Կիլպըրթ ճանահիկեան  
Փիթըր Թամուզեան  
Փիթըր Սահակեան  
Զարլի Քամէմեան  
Մէյլըր Ճանահիկեան

Թասըլ Քէյիշեան՝ մէկ տարի  
Մաթիու Քատէմեան՝ մէկ տարի  
Տրդատ Տրդատեան՝ մէկ տարի  
Հըրպըրթ Պարսամեան՝ մէկ տարի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ